# ԱՄՆ-ը հավանություն է տվել ԵԱՀԿ ջանքերին

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ը հավանություն է տվել Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանն ուղղված այն ջանքերին, որ նախաձեռնել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ դեսպան Անջեյ Կասպրշիկը: Հայտարարության մեջ, որն արվել է սեպտեմբերի 14-ին ԵԱՀԿ մշտական խորհրդի նիստում, ԱՄՆ գործերի հավատարմատար Ջոսայա Ռոզենբլատը բարձր է գնահատել Կասպրշիկի եւ իր խմբի կատարած աշխատանքը հրադադարի պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության, ականազերծմանն աջակցության եւ ռազմագերիների վերադարձի ապահովման ուղղությամբ: Նա նշեց նաեւ, որ ԱՄՆ-ին հուսադրում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ տվյալ հարցի վերաբերյալ ուղիղ երկխոսության շարունակումը: Ըստ Ռոզենբլատի, դա վկայում է, որ նրանք «լրջորեն տրամադրված են կարգավորել խնդիրը»: «Մենք կցանկանայինք հատկապես նշել դեսպան Կասպրշիկի ձգտումը՝ ավարտել ռազմագերիներին վերադարձնելու գործընթացը: Մենք ողջունում ենք դրական արձագանքը այդ ջանքերին Լեռնային Ղարաբաղի ղեկավարության եւ Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների կողմից, որի արդյունքում վերջերս ազատվեցին 13 ռազմագերիներ: Մենք նաեւ ողջունում ենք եւ խրախուսում դեսպան Կասպրշիկի որոշումը՝ նոր ազդակ հաղորդել անհետ կորած անձանց առնչվող աշխատանքին»,- հայտարարել է Ջ.Ռոզենբլատը: